

քանի մ'օրինակաց մէջ: Պաւղոս Տարօնացին գայթակղած էր՝ որ Փրանկները « գարջ եւ զմեռերտի անխտիր ուտեն » (Թէոփ. 178). եւ Տաթեւացին անոնց ու մեր սովորութեանց տարբերութեանց մէջ կը թուէ « զպիղծ կենդանիս ոչ խտրել, եւ զհեղձոցեալսն ուտել » (Հրց. 553): Շնորհալին, հեզութեան այդ գերագոյն պատկերը, կ'այլափոխուի՝ կը զայրանայ եւ ծանրապէս կը նախատէ Ասորիները, որոնք թողած էին կերակրոց խտրութիւնքը. եւ անոնց դէմ կը պայքարի՝ յենլով հին ու նոր կտակարանաց վրայ (Ընդհ. 158-9):

Նշանաւոր իւանէ իշխանի որդին Աւագ՝ թաթար զօրապետին բանակն երբ գնաց, բերին՝ կ'ըսէ կիրակոս՝ շատ մսեր « ի սուրբ եւ յանտարբէ անասնոց . . . եւ իւրմըզս (որ է շիճուկ) ի կաթանէ օխոց », սկսան ուտել եւ ըմպել: Աւագ եւ ընկերները սակայն հրաժարեցան ուտելէ, պատասխանելով՝ թէ « Քրիստոնէից ոչ է սովորութիւն ուտել զայս կերակուր եւ ըմպել զայս ըմպելի » (138): Նոյն պատմիչը գերեալ անեցւոց համար կ'ըսէ սրտցաւութեամբ՝ թէ անոնք որ կը հաղորդուէին Աստուածորդւոյն պատուական մարմնէն եւ արենէն, « ուտէին զմիս անտարբէ եւ հեղ-